

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-ԻԶԵՐ ՄԱՐԶԵՐԻ ՄԻԶԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

16.10.2013

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը և նրա ղեկավարած պատվիրակությունը 2013թվականի հոկտեմբերի 16-18-ը իրենց մասնակցությունը կունենան Ֆրանսիայի Վալանս քաղաքում տեղի ունեցող հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովին: Իսկ մինչ այդ հոկտեմբերի 14- ին Ֆրանսիայի Հանրապետության Գրենոբլ քաղաքում Ֆրանսիայի Հանրապետության Իզերի Դեպարտամենտի գլխավոր խորհրդի և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի միջև ստորագրվել է ապակենտրոնացված համագործակցության 2013-15թթ պայմանագիրը: Այն ստորագրել են Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը և Իզերի դեպարտամենտի գլխավոր խորհրդի նախագահ Անդրեյ Վալլինինը: Ըստ ստորագրված պայմանագրի կողմերը այսուհետ կհամագործակցեն առողջապահության, տուրիզմի զարգացման և ֆրանսերեն լեզվի ուսուցման ու տարածման ոլորտներում: